ՆԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍՈՒԲԳՐԱՅԻՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ Դ. ՎԱՐՈՒԺԱՆԻ «ԳՈՂԳՈԹԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐ» ՇԱՐՔՈՒՄ

Մարդկային կյանքում տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները ապրվածաշնչյան հավերժական ճշմարտություններ են, որոնք դեռ շարունակվում են մարդու եւ մարդկության պատմության մեջ: Ամեն գրող աշխարհը մեկնելու իր գեղարվեստական մեթոդն ունի: Դանիել Վարուժանը եւս բացառություն չէ: Նա աշխարհն ընկալում է իբրեւ Ասծո բանաստեղծություն, որն իր խոհափիլիսոփայական-ներզգայական ենթաշերտով արտացոլվում է նրա պոեզիայում. «Ասրված մեր սիրտը հայելի մը ըրած է, որ հավատարմորեն կը ցոլացնե ամեն ինչ՝ առանց ամեն ինչ ըլլալու: Եւ այս իսկ պատճառ³վ է, որ երբ քերթողը ծնանի՝ իր հետ կը ծնանի նաեւ Աշխարհը իր գաղտնիքներով»[1]- իմաստասիրում է Վարուժանը իր նամակներից մեկում:

Դ. Վարուժանը տեսնում էր Ասծո եւ մարդու փոխկապվածության սուրբգրային հավաստումը. «Ես կը կարծեմ թե (բացի միջազգային գլուխ գոր<ծոց>ներուն ընթեռնումը) լավ թափանցած եմ գեթ Շեքսպիրը, Հյուկոն, Ռուսոն, Պոդլերն ու Ասրվածաշունչը... Կարող չեմ ըսել, թե ի՞նչ հոգեկան տանջանք էր, ի՞նչ ճգնաժամ էր, որուն մեջ ես կ՚ապրեի այդ օրերը: Լույսի եւ խավարի կռիվ մը կար մեջս, եւ ես չէի գիտեր, թե ատիկա արշալո՞ւյս է, թե՞ վերջալույս. բայց գիտեի, որ այդ երկունքին նման հոգիս կարմիր կը քրտներ, հոգիս արյուն կը քրտներ ճշմարտապես եւ խորապես կը տանջվեի... որուն ծնունդ կուտար ինքն՝ իմաստասիրությունը՝ դեռ մեջս նորածին եւ անորոշ, բայց զորեղ ու հարաճուն»[2]: Երիտասարդ գրողի այս բնութագրման մեջ տեղի է ունենում մի ներքին խմորում, մի կենսական փոփոխություն՝ հագեցած նրբին փիլիսոփայությամբ:

Վարուժանը ծանոթ էր իր ժամանակի գրական հոսանքներին: Նա չէր կարող անտարբեր լինել արվեստի նորագույն ձեւերի ու միջոցների նկատմամբ: Բայց նա, որոշ ազդեցություններով հանդերձ, իր ցավը պատմելու ձգտումի մեջ ուժեղ գտնվեց: Նա իր ներքնատեսությամբ, խոր զգացումով տեսնում էր իր եւ իր ժողովրդի մոտավոր ճակատագիրը:

XX դարի ազգային -քաղաքական խնդիրների շիկացումը խոր ազդեցություն է թողնում նրա ներաշխարհում: Գիտակցելով Ասրվածաշնչի հավերժական ուժն

1 Տե՛ս **Դանիել Վարուժան,** ԵԼԺ, հտ. 3, Երեւան, 1987, էջ 446:
2 Անդ, էջ 310-315:

ու կենսունակությունը՝ Վարուժանը վկայակոչում է վերջինիս՝ ժամանակակից հարցեր ու խնդիրներ արծարծելու, պատկերներ եւ խորհրդանիշեր վերցնելու եւ գեղարվեստորեն արտացոլելու իր պոեզիայում: Թերեւս պետք է նշել, որ նա անջրպետ չի դնում իր ժամանակաշրջանի եւ Սուրբ գրքի միջեւ: Զուգահեռները ծնվում են ակամա, ինքնին: Եւ վերջապես, այս երկուսը խաչաձեւվում են հոգեվիճակային անցումներով, փոխներթափանցումներով:

Բանաստեղծական հեթանոսությունը միջոց էր Վարուժանին գեղագիտական գաղափարներ արտահայտելու իր գրքում՝ «Հեթանոս երգեր»-ում,որը քրիստոնեական խորությամբ եւ գեղարվեստորեն շարունակվեց «Գողգոթայի ծաղիկներ» շարքում՝ սուրբգրային արտասովոր նուրբ գեղագիտությամբ, համամարդկային արժեքներով ու սիրով:

«Գողգոթայի ծաղիկներ» շարքում «Ծնվում են երազներն ու հեռապատկերները, Վարուժանը գնում է մի նոր աշխարհի հայտնագործման: Իրապաշտական ցնցող պատկերներին, «Գողգոթայի ծաղիկներին» գրեթե զուգընթաց ծնվում է ռոմանտիկական մի աշխարհ, որն արտաքնապես՝ թեեւ հեռավոր, բայց ներքնապես շատ մոտ էր նոր օրերին...»[3]: Շարքն սկսվում է «Փա՜ռք սարբինային. Քրիստոս կը պատարագե» բնաբանով՝ Քրիստոսի անանձնական նվիրաբերումով ՝ կյանքին եւ մարդուն պատարագվելով, որի վրա հենց հիմնվում է շարքի ծրագրային բանաստեղծությունների հոգեբանական ենթահողը:

Շարքի առաջին բանաստեղծությունը «Աստծո լացն» է, որը կարծես գեղարվեստորեն վերահմաստավորում է Գիրք Ծննդոցի «Ստեղծագործութեան պատմութիւնը» բաժինը: Ի տարբերություն Աստվածաշնչի՝ Վարուժանը փորձել է գտնել **արարչության հուզական տարրը, տենչը,** այն, որը սկիզբ է դնում արարչությանը, լույսին: Դա ձանձրույթից, մենակությունից ծնված թախիծն է.

Երբ միջոցին մեջ տեղի տված չէր
Դեռ Ոչընչությունն այս տիեզերքին՝
Ես կարծեմ Աստված բան մը կ՛որոներ՝
Որ դարման ըլլա տաղտուկի վերքին:
Երբ Անհունն այսպես դատարկ գտավ Ան,
Իր մեջ ըզգաց խոր, դառնակըսկիծ ցավ.
Եւ Լրռության վրա ու Ոչընչության
Հուսահատութենեն սրտաբուղխ լացավ: (II, 85)

Արցունքի մեջ գեղեցկություն կա, քաղցր ցավ, թախծոտ լույս: Աստված ապրում է իր կատարյալ միայնության դրաման, իր միայնակ կատարելության բանաստեղծական դրաման, սա իսկական բանաստեղծական քաոս է, որին հաջորդում է ստեղծումը.

3 Տե՛ս **Նր. Թամրազյան**, Երկեր, Գ, Երեւան, 2010, էջ 344:

Վարն իր արցունքներն ուզածը տրվին՝
Կազմելով մեյմեկ ասպղեր երկընքին.
Եւ Բանասպեղծին նման Աստված ալ
Որպեսզի ստեղծե՝ հարկ եղավ նախ լալ[4]:

«Ճանապարհ խաչին»-ում խաչված հոգու խորհուրդը կա: Այստեղ Քրիստոսը քնարական հերոսի հոգեկիցն է. «Պայրընի խորհելակերպով կյանքը հասունցած մահեր ունի, որ ի մէջ կեանքի անմահութիւնն է, ապագայ մեծ կենսապաշտութիւնը... Հայ բանասպեղծին ըմբռնումով կեանքը պատարագ մըն է: Սուրբ է իտէալին ջարչարանքը, սուրբ է իր մեծութիւնը... Յիսուսները միայն արժանի են խաչելության:

Այսպէս կը գերըմբռնէ հայ քերթողը Մարդը մարդուն մեջ, Մարդը կեանքին հանդեպ: ...Գողգոթայի ծաղիկները հատորին իմաստասիրական նոր գլուխ կը բանան. կը ծնի իր լուսաւոր իմացական Ճանապարհի Խաչի քերթածը, ուր մարդ Աստծոյ չափ կը տառապի: **Նոր խաչեալը հին խաչեալին կը դիմէ, իր վերքերը կը մրցին անոր վէրքերուն հետ: Կը զգուէ տակաւ Մարիամներու բարեպաշտ հոգին, կը ճախրէ հորիզոնէ հորիզոն...**»,-[5] նկատում է Լեւոն Էսաճանյանը:Եւ քնարական հերոսը Գութ է աղերսում իր նման տառապալից կենսաընթացքով անցած Փրկչից՝ Մեծ Տառապյալից.

Տառապած Հիսուս,
Դուն որ ունեցար արտասվող աչքեր՝
Գրթա աչքերուս...[6]

Սա խաչվողի՞ ճանապարհն է, թե՞ ճանապարհ դեպի խաչը. դժվար է ասել: Պատճառն այն է, որ շատ սիրելու, նվիրվելու, փրկելու համար են ի վերջո խաչվում. «Տե՛ս, տե՛ս, սրտիս վրա դաշույն մ՚ է խրվեր, //Ես շա՛տ եմ սիրեր»: Երբ սիրում են, բացվում է խաչի ճանապարհը... Այստեղից է գալիս հոգու մեծ Տրտունջը: «Տրտունջք» բանասպեղծությունը, որն ունի բնաբան «Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ. Հիսուս»),[3]յն վերցված է Մատթեոսի Ավետարանից. «Եւ իր հետ վերցնելով Պետրոսին եւ Զեբեդէոսի երկու որդիներին՝ սկսեց տրտմել եւ տագնապել: Այն ժամանակ նրանց ասաց. «Հոգիս տխուր է **մահու չափ.** այստե՛ղ մնացէք եւ ինձ հետ հսկեցէ՛ք»: ...Արթո՛ն մնացեք եւ աղո՛թք արէք, որպէսզի փորձութեան մէջ չընկնէք. **հոգիս յոժար է, բայց մարմինս՝ տկար**»» (Մատթ. ԻՁ 37, 38, 41): Ուշագրավ

4 Ուշագրավ է, որ նմանատիպ բանասպեղծություն ունի նաև Ա.Չոպանյանը «Աստղերը» վերնագրով: Տե՛ս Ա. Չոպանյան, Երկեր, Երեւան, 1988, էջ 31: Զարմանալի նույնություն կա գաղափարների միջև՝ չնչին տարբերությամբ (Ա. Չոպանյանի երկում Աստված արտասվում է անդարձ սխալը վերականգնելու անհնարինությունից: Նա լսում է մարդու գալիք անեծքի խոսքը, ցավ ապրում): «Հետաքրքրությամբ կարդացի ձեր «Աստծո արցունքները», ճիշտ նույն գաղափարը շատ լավ կարող է գալ երկու տարբեր անձերու»-գրում է Ա.Չոպանյանը (Տե՛ս Դ. Վարուժան, Նամականի, Երեւան, 1965, էջ 264): Իսկ Վարուժանը գրում է Ա.Չոպանյանին. ««Աստուծո արցունքները» անունով քերթվածիկ մ՚ունիմ, կարծեմ հինգ տարի առաջ Վենետիկ գրված, գլխավոր գեղեցկությունն, որ արցունքներու և աստղերու նմանությունն է՝ Զերինին ճիշտ նույնն է: Մարդկային մտքի եղբայրությո՛ւն մըն է. չեմ գիտեր...» (Անդ, էջ 135):

5 Տե՛ս **Լ. Էսաճանեան**, Դանիէլ Վարուժան (Կեանքը եւ գործը), Կ.Պոլիս, 1919, էջ 18-19:

6 Դանիել Վարուժան, ԵԼԺ, հտ. 2, Երեւան, 1886, էջ 86: Հետագա մեջբերումները կարվեն սույն հատորից՝ էջը նշելով կից:

է, որ Վարուժանի քնարական հերոսը գրգռում է «Մինչեւ ի մահ», Ավետարանում Քրիստոսը գխուր է «մահու չափ»: Ընդհանրությունը հոգեբանական բնույթ ունի. երկուսն էլ գիտեն մահվան գինը: Երկուսն էլ ոչ միայն հոգով են գանջվում, այլեւ մարմնով, ինչը հատկանշական է շարքի մյուս բանաստեղծությունների համար («Խաչին», «Մեռնող բանվոր», «Բանվորուհին»):

«Տրտունջք»-ը նվիրված է Եղիա Տեմիրճիպաշյանին, որն ինքնասպան էր եղել[7]: Քրիստոսի հոգու պես բանաստեղծի հոգին էլ է գառապում, եւ միայն ընկերը կարող է նրան հասկանալ, նա, ով ապրել է գառապանքի իմաստնությունը. «Իմ վիշտը դուն կրրեցիր, դուն կրրնաս զայն հասկրնալ...»: Եւ նրանք չեն մասնակցում իրենց ապրվածային ծաղկուն ժամանակին. «Թե, ա՜հ, ո՜րքան ահեղ է անցնիլ կյանքի զարուներն՝ //Եւ միմիայն աչքերու մեջ արցասուք ունենալ»: Ե՛ւ Հիսուսը, եւ՛ Եղիան, եւ՛ Վարուժանը չափել են գառապանքի անդունդը՝ մատաղ կյանքի հաշվին: Բանաստեղծը սիրել է կյանքում, զգացել դրա քաղցրությունը.

Ու պահ մը ես ըզգացի թե զըվարթուն մը կու գա
Դուռիս մեջեն ավետել թե երջանիկն եմ երկրիս... (II, 94)

Բայց իր բաժին երջանկությունը կարճ է գեւում. «Սիրտը սըրտիս վրա ուրիշ սըրտի մ՚համար բաբախեց»: Բանաստեղծը, ճիշտ է, մի պահ արհամարհում է այդ կնոջը, սակայն փորձում է հասկանալ նրան. նա նույնպես գառապող էակ է, զոհ, որովհետեւ չունի իր բաժին երջանկությունը:

Գուցե ես վա՛տ մըն էի. ուզած էի սոսկ ապրիլ
Սըրտի՛ս համար սեփական, զայն լեցընել բերկրանքով...

Թերեւս զիս ուրիշին համար բախտն էր սահմանած...

Ու ես խաչիս վըրայեն խաչված Մարդուն նայեցա
Ինչպես դուն ինքըդ ըրիր, բազմաչարչա՛ր Տեսանող:

Ահա այստեղ էլ հասկանում է Քրիստոսի «ես»-ի՝ իբրեւ «քնարի» զոհաբերումը հանուն «մենք»-ի երջանկության.

Ոմանք անով կ'ամոքվին, կ'օրինակեն ոմանք զայն.
Բայց ա՜ն միայն կը զորե երգը երգից դաշնակցել՝
Ով որ կ'ըզգա թե սիրտն իր Տիեզերքին առանցքն է,
Եւ արյունլվա գըլուխն իր Նիրվանային կը դրպչի:

Բանաստեղծը Քրիստոսի նման իր «ես»-ը դնում իր ժողովրդի «մենք»-ի մեջ, գնում նվիրումի ճանապարհով .

Ասրված մը, ո՞ի եկած էր քառսի մեջ բընակիլ...
Այնտե՛ղ էի՝ ուր բախտին խորթ զավակները համուռ՝
Ապրելու մեծ ու արդար իրավունքին ի խընդիր՝
Բըռընկցուցին կատարներն ոստաններուն ցասումո՛վ:
Օ՜, խրոխտ զարկերը **Եսիս** միլեոններու սըրտին մեջ:

---

7 «Գողգոթայի ծաղիկներ» շարքի մանրամասն մեկնությունը տե՛ս Վ. Գաբրիելյանի «Դանիել Վարուժան», գրքում , Երեւան, 2009:

Իսկ ժողովուրդը դեռ անկապար է այդ կապարյալ զոհաբերության համար. ընտրում է «սողալը անարգ»: Սրանից հետո արժե՞ ապրել. «Սընուցանել հա՞րկ է դեռ այս փուճ մարմինն՝ հակառակ // Սրտիս անմեռ սադրանքին, որ մահվան լոկ կ՚ունկդրե»: Եւ եթե երջանկությունը ունի գաղտնիք, ինքը կապրի հանուն դրա՝ վերանորոգվելու համար, բայց մեղավորների ձեռքն է ընկնում.

Լուսացայտ մարդը ինձ ցույց կու տա զոհանվեր
Պարանը սուրբ՝ զոհ քու մահդ իմ վախճանիս կըտակեց.
Կը հասկընամ թե անոր շուլլըվելով է միայն
Որ սիրտս ըսփինքսը կ՚ըլլա, վիշտըս գաղտնիքը անոր,
Եւ ես զոհի մը ցընթող ճենճերին պես կը հասնիմ
Նիրվանայիդ եւ քեզի, հավերժակա՛ն Հանգիստին...

«Լքում» բանաստեղծության մեջ նույն թախծոտ հոգեվիճակն է՝ ծնված ճակատագրի անխուսափելի դրամայից: Բանաստեղծությունն ունի բնաբան. «**Կորիցէ օրն՝ յորում ես ծնայ: Յովբ**». «Ապա Յոբը դժուարութեամբ բաց արեց բերանը, անիծեց իր ծնուած օրը, խոսեց ու ասաց. «**Կորչի թող օրն այն, երբ ես ծնուեցի...**» (Յոբ Գ. 3):Բանաստեղծը ընտանիքի կորստի խնդիր չունի, այլ անձի երջանկության կորստի, ինչպես Հոբը.

Ո՛չ ոք, ո՛չ ոք գիտե վիշտն՝
Որ թոքերուս մեջ, զերդ խաշխաշ թունաբեր
Արագորեն կ՚ուռճանա:

Ճակատագիրը սահման է դրել նրա օրերին: Հոգին սգում է ինքն իր մեջ, արտասվում, բայց երբեք չի մեղանչում.

Ու ամեն հոդ կը հաղթվի, կը թողու
Հոգին ազատ , հոգին մաքուր, մըտնելու
Գիրկն Հանգիստին: Դարձյալ քեզի՝ պիտի գամ:

Ոչ ոք չի հասկանում, որ հուսահատությունը ընտելացնում է նրան մահվան հետ. «Իմ տարիները հաշուուած են արդ. բռնել եմ արդէն անդարձի ուղին»: (Յոբ ԺԶ 23): «Երկու Յոբերն ալ կեանքէ դառնացած՝ իրենց ահաւոր բաժանումին մէջ արդեօք անոր հանդէպ վերջին պաշտումը չե՞ն զգար»,-գրում է Լ. Էսաճանյանը: Բան³ստեղծը զգում է Աստծո հառաչանքը, գութը, խոհը՝ մարդու ու նր³ն սահմանված կորստի հ³մ³ր: Քնարական հերոսը հավատում է, որ մի օր անձնասպան հոգին «կրողրոջի»: Այս բանաստեղծությունը իր հոգեկան բ³րդ տրամադրությամբ, անձկությամբ և լ³վ³ïեստությ³մբ հիշեցնում է նաեւ Դավթի սաղմոսների գիրքը՝ հավերժական ձգտումը: «Արդ, ինչո՞ւ ես տրտմում, հոգի իմ, կամ ինչո՞ւ ես ինձ խռովեցնում. յոյսդ դիր Աստծու վրայ, օրհներգիր նրան, **իմ անձը փրկողն Աստուած է**»: Նույն հոգեվիճակային տրամադրություններն են առկա «Մենավոր» բանաստեղծության մեջ, ուր քնարական հերոսը սոսկում է հոգու դատարկությունից եւ անձի կորստից : Լույսի մեղմիկ շողն էլ հույս է իր կյանքի վերջալույսի համար, բայց սեփական

դժբախտությունը տեղի է տալիս: Այս Մենավորը հենց միայնակ հոգին է, որի մեջ էլ կա Աստծո սուրբ արցունք. «Արցունք մ՚ահա մարգարտի պես սառեցավ // Ծայրին վրրա թարթիչիս, // Եւ սիրտրս դեռ տրրտու՚մ տրրտու՚մ կը փրղձկի»: Աստծո սուրբ պատկերը եղծված չէ նաեւ «Միջոյի», «Դաշտերու տղայի» մեջ («Դաշտերու տղան»): Եւ նույն սիրով է մոտենում նաեւ սրան.

Այտերրդ վա՚ռդն առնե պիտի, սերդ՝ լուսնակ,
Սիրտրդ պրլպուլն,երգրդ հովն, աչքերդ մանիշակ,
Հոգիդ երկինքն, արցունքդ ... ե՚ս:

«Ծաղկեփունջ կամ բրգնիկցիի մը նվագները» եւ «Գողգոթայի ծաղիկները», կարծում ենք, նմանության եզրեր ունեն: Մի ներքին, թաքուն իրողությամբ են սրանք կապվում: **Բնության ծաղիկները դարձել են տառապանքի ծաղիկներ՝ մարդիկ: «Գողգոթայի ծաղիկները» տառապանքի մի յուրօրինակ հոգեփունջ է, որտեղ ամեն մի հոգի-ծաղիկ, սուրբ արտասուքը աչքերի երկնքում՝ լույսի է ձգտում:** Եթե «Սարսուռներ»-ում ընկերային անարդարությունը հետեւանք է մարդկային խղճի անարդարության, ապա «Գողգոթայի ծաղիկներ» շարքում զարգացած տեխնիկան (որն Աստծո տեղն է «զբաղեցրել») պատճառ է դառնում մարդկային կյանքի ողբերգության. նա դարի չարիքն է («Մեռնող բանվոր», «Սպասում», «Մեքենաներ», «Դադար»). «Մեքենան է իրենց տերն, իրենց օրենքը անեղծ, // Որ կը մոռնչե անդադրում հոգիներուն մեջ տրխեղծ»:

Ահա «Բանվորուհին». «Ու դուն կ՚երթաս գործարանի մեջ աշխատիլ // Լույսին համար ու կյանքին»: Վարուժանն էլ Քրիստոսի նման այս էակներին համարում էր իր քույրերն ու եղբայրները («Մեռնող բանվոր», «Սպասում»):Ս³րտռում է նր³ գութը.

Ես կը խորհի՚մ եւ խենթի պես կը բաղձամ
Վար իջնել, քո՚ւյր դալկադեմ,
Քո ՚վդ իջնել, համբուրել ձեռքդդ նիհար,
Եւ հրծծել.- «Քեզ կը սիրեմ»: (II, 102)

Ահա եւս բնության մեկ տառապյալ ծաղիկը՝ «Ընկեցիկ»-ում: Մայրը փրկվում է՝ մտածելով որդու փրկության մասին. «...զուցե ունենա որդին //Վաղը այս կյանքեն կյանք մը լավագույն»: Նա ապրում է իր մայրության անդարձ կորուստը. «Մայրը խելացնոր, մայրը ակամա, // Ըշտապ կը փախչի՞... սիրտը հոն թողած»: Նա էլ երազ ունի իր փոքրիկի համար. «Մարդիկ զայն կարծեն իշխան մը փոքրիկ. // Եւ զայն իր հրեշտակն ընդունի Աստված»: Կյանքը շատ դաժան է. երբ փոքր ես , ծնողներն են քեզ տեր, իսկ հետո՝ աշխարհը: Նույնը չէ՞ արդյոք Սուրբ գրքում: Այս կինն էլ Մարիամ Աստվածածնի պես գնում է մեծ զոհաբերման (միայն հանգամանքներն են տարբեր):

«Խաբված կույսեր» բանաստեղծությունը եւս լրացնում է այս ծաղկեփնջի շղթան: Սրանք նույն «Թշվա՚ռ Լեյակն» են, ունեն նրա ճակատագիրը.

Հեւրո անոր սիրոյն փված հաճոյքեն
Ծուր ձանձրացած, անգութ զեփիւռ ձրգեց զայն
Ցեխերու մեջ եւ առաթուր՝ որն անդեն
Հյուծած՝ չորցավ, ահ, ի փիոց կուսական: (II, 256)

Կույսերը ապրում են իրենց խաբվածության եւ անմեղության դրաման.

Բայց հեշտությունն ամբարիշտ կը դավեր քա՛ղցը ձերին,
Եւ ծախեց ձեր հոգիներ՝ զբնելով մարմիննիդ:

Ձեր հյուղերեն ներս մըտան սիրահարի պես անմեղ...

Եւ դուրս ելան քըրքջալեն:
Եւ փողոցնե՛րը ինկաք. Դուք օր մ՚ազնի՛վ բյուրեղներ,
Կոխոտվելով մարդերեն՝ եղած Էիք այժըմ ցեխ:

Նրանք պետք է պաշտպանեն իրենց «անգեն մայրությունը».

Մարգարիտա կոչվեցաք՝ Դըժոխքեն իսկ պըղծըված,
Մարիամ՝ պղծված Երկինքեն:

Եւ «վշտահեղձ» հոգով չեն կարողանում ապրել իրենց մայրության խորհուրդը՝ նոր երազի համար : **Չի կայանում մայրական կատարելությունը: Նրանք խաբվում են չարից , ինչպես Եւան՝ սատանայից:**

Մոր աղոթքը դառնում է վաղվա կույսի վերածնության առհավատչյան («Մամուս աղոթքը»), որի համար մարմինը՝ «միշտ ծնրադիր», հոգու առջեւ է ապրել: Մայրն այստեղ Աստվածամայր է դառնում. «մարդուն հոգւոյն մէջ արբեցութեան ու սիրոյ կրակը վառող այդ հրաշագեղ էակին քովն ի վեր կայ այն միւսը, այն զոր զգեստներ է ճակատագիրը իր փթթումին մէջ, ու փողոց նետեր մսի զգուելի կոյ՚ի մը պէս: Ահա ինչպէ՛ս անոնցմէ շատեր սփոփանք կ՚աղերսեն երկինքէն, Աստուծոյ ոտքը աղօթքի երթալով, կամ ուխտի վազելով դէպի «Հրաշքին Աղբիւրը»»[8]: «Հեթանոս երգեր» շարքը սկսվում է «հաճոյքով» եւ շարունակվում է տառապանքով: Կարծում ենք, ամենադիպուկը Հ. Սիրունին է նկատել.«Հաճոյքին մէջ ներկայ է միշտ տառապանքը, ու տառապանքին մէջ քաղցրութիւն կայ եթէ գիտցար զայն գտնել... Բանաստեղծը գիտցաւ թէ տառապանքն է որուն ուժովը մարդը պիտի կրնայ Աստուծոյ դէմ ճակատիլ, ու բարձրանալ ինքն ալ արարչական գահոյքին...»[9]:

Իսկ «Մատյանն ահա...» բանաստեղծությունը լրիվ եզրափակում է բանաստեղծի ասելիքը: Եթե շարքի սկզբում հին դարն էր, ապա վերջում՝ նոր. «**Հեւրո այս Դարն՝ Հիսուսի պես կարեւեր**»: Իսկ երկու դարը իրար է կապում արշալույսի տենչը. «Արշալույսի մը երկունքեն բըռնըված»: «Հեթանոս երգերում» դա «Ռեգաս»-ն է՝ աստվածային ձին, որը պետք է հասնի երազի «էրըլվայսներին», երկնքին, արեւին: Իսկ «Գողգոթայի ծաղիկներ»-ում՝ «Լույսն» է, որը Քրիստոսի մարմնի գինին է, փիեզերքի բերկրությունը, բնության արյունը, որը ներումի պես հոսեց «...Մեղքին //սեղանին շուրջ հավաքված մարդերուն // Անհուության ըսկիհներուն մեջ դատարկ»: Լույսը Քրիստոսի անանձնական արյունն է.

8 Յակոբ Սիրունի, Դանիէլ Վարուժան, Պուքրէշ, 1940, էջ 211:
9 Անդ, էջ 210:

Ան ամենուն զինքը կու տա, ամենո՛ւն
Կը բաժնվի, եւ կը մնա անբաժան
Նըշխարքին պես. ան նըշխարքն է՝ որ կ'իջնե...

Այս բանաստեղծության մեջ լույսը եւս զոհաբերվող է, մարդկային կյանքը իմաստավորող , լուսավորող, որից էլ ծնվում է կենսասիրությունը: Եւ Աստծու արցունքով էլ ի վերուստ մարդը սրբագործվել է.

Տառապած Սիրտն ո՞վ պիտի կշռել կարենա
Նըժարին մեջ՝ Տիեզերքին դեմ առ դեմ:
Ան լոկ կըրնա ճանչնալ Երազը սրարբած՝
Ո՞վ կ՛արբենա կյանքի դիրտովն ու խունկով,
Ան որ Մարդն է՝ լույսով, ցեխով թըրծըված,
Ան որ Մարդն է՝ սըրբագործված արցունքով: (II, 158)

Քրիստոսն ասում է. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե՝ մեկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու արքայութիւնը մտնել...» (Յովհ. Գ 5):

Ինձի՛, ինձի եկեք այսօր բոլորնիդ.
Սիրտս ա՛յնքան բոց ունի, հոգիս այնքա՛ն լույս՝
Որ ձեր խյուս
Ցեխերն իսկ կը շաղվեմ նո՛ր Մարդկություն
Եւ նո՛ր Հույս: (II, 138)